**Երկրորդ ընթերցում**
**(լրամշակված նախագիծ)**

**Պ-793-07.03.2024-ՏՀ-011**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «գույքահարկի գծով» բառերից հետո լրացնել «ընթացիկ հարկային տարվան նախորդող տարիների» բառերով:

2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից:

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

*~~Առաջին~~Երկրորդ ընթերցում*
*(լրամշակված նախագիծ)*

*Պ-793-07.03.2024-ՏՀ-011/1*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 251-րդ ~~հոդվածի~~հոդվածում՝

1) 2-րդ մասում «գույքահարկի գծով» բառերից հետո լրացնել «ընթացիկ հարկային տարվան նախորդող տարիների» բառերով:

2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ~~հունվարի 1-ից:~~

հուլիսի 1-ից:

# Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Պ-793-07.03.2024-ՏՀ-011/1 ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | ՀՀ կառավարություն | **Հոդված 1** | Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածում առաջարկվում է՝<br><br>1) 2-րդ մասում լրացում կատարելու փոխարեն այդ մասն ուժը կորցրած ճանաչել,<br><br>2) նույն հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝<br><br>«3. Տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցների տեխնիկական զննությունն իրականացվում է հաշվառող մարմնի կողմից տրված՝ տվյալ փոխադրամիջոցի գծով ընթացիկ հարկային տարվան նախորդող հաշվետու տարիների համար հարկային պարտավորություններ | Ընդունվել է ի գիտություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | չունենալու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա, որում նշվում է նաև այն ժամանակահատվածը, որի համար տվյալ փոխադրամիջոցի մասով կատարված են փոխադրամիջոցների գույքահարկի գծով հարկային պարտավորությունները:»,<br><br>3) նախագծի հետագա քննարկումների շրջանակներում քննարկել փոխադրամիջոցների գույքահարկի, ինչպես նաև անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունների հաշվեգրումը (ձևավորումը) ամսական կտրվածքով կատարելու նպատակահարմարության հարցը: | | |
| 2. | ԱԺ պատգամավոր Բաբկեն Թունյան | **Հոդված 1** | Առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածում՝<br><br>1) 2-րդ մասում «գույքահարկի գծով» բառերից հետո լրացնել «ընթացիկ հարկային տարվան նախորդող տարիների» բառերով:<br><br>2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 3. | ԱԺ պատգամավոր Բաբկեն Թունյան | **Հոդված 2** | Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից: | Ընդունվել է: | Ընդունվել է: |